Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 2

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստի

10.09.2013թ. ք. Երևան
Ժ. 11.00 ՀՀ ԱՍՀՆ նիստերի դահլիճ

Մասնակցում էին՝
Կոմիտեի նախագահ՝ Ա. Ասատրյանը
Կոմիտեի անդամներ՝ Ա. Պետրոսյանը, Ջ.Բաղդասարյանը, Ս.Հարությունյանը,Ա.Գրիգորյանը,Ս. Տերտերյանը.
Բացակայում էր՝ Ֆ. Բերիկյանը.
Հրավիրված էին՝ Ա. Կեսոյանը, Է. Գևորգյանը, Ա. Մինասյանը, Ա. Մանվելյանը, Ա. Բարսեղյան

Նիստը բացման խոսքով սկսեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, կոմիտեի նախագահ՝ Ա. Ասատրյանը, նա հրավիրեց ներկաների ուշադրությունը ներքին աուդիտի կոմիտեի նիստի օրակարգին: Ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ** հաստատել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 2013 թվականի սեպտեմբերի 9-ի նիստի հետևյալ օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 09.09.2013թ. նիստի

1. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 02 խմբի, 01 դասի <06. Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում> ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

2. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 02 խմբի, 01 դասի <08. Հայաստանի Հանրապետության մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների

տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում> ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

1. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 02 խմբի, 01 դասի <06. Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում> ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Ա. Ասատրյան, Ա. Պետրոսյան, Ջ. Բաղդասարյան, Ս. Հարությունյան, Ս. Տերտերյան, Ա. Կեսոյան, Ա. Մինասյան, Է. Գևորգյան)

Օրակարգի 1-ին հարցի առիթով ելույթ ունեցավ Ս. Տերտերյանը, որը անրադարձավ <Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում> ծրագրի շրջանակներում 2012 թվականի հունվարի 31-ին՝ ՀՀ ԱՍՀՆ և <Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն> ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրում բացայտված մի շարք տեխնիկական թերություններին:

Ա. Ասատրյանը աուդիտորական հաշվետվությունում արձանագրված տեխնիկական թերությունների վերաբերյալ շեշտեց, որ այսուհետ՝ սույն կարգի խախտումներ թույլ տված պաշտոնատար անձինք խիստ կպատժվեն:

Շարունակելով Ս. Տերտերյանը ներկայացրեց <Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում> ծրագրի գործընթացը կարգավորող իրավական ակտերի պահանջների ուսումնասիրության արդյունքները, մասնավորապես՝

ա/ <Սոցիալական աջակցության մասին> ՀՀ օրենքի,

բ/ ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի <Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին> թիվ 730-Ն որոշմամբ հաստատված հավելվածների,

գ/ ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի <Ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին> թիվ 1874-Ն որոշմամբ հաստատված կարգի,

դ/ ՀՀ սոցիալական ապահովության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի <Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկման կարգը հաստատելու մասին> թիվ 127-Ա հրամանով հաստատված կարգի վերաբերյալ:

Ս. Տերտերյանի կողմից ներկայացված իրավական ակտերի պահանջների ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արտահայտվեցին Ա. Ասատրյանը, Ա. Պետրոսյանը, Ջ. Բաղդասարյանը, Ս. Հարությունյանը, Ա. Կեսոյանը, Ա. Մինասյանը և Է. Գևորգյանը:

Ավարտելով Օրակարգի 1-ին հարցը, Ս. Տերտերյանը ներկայացրեց ՊՈԱԿ-ի կողմից սպասարկված թվով 1500 շահառուների անհատական տվյալները՝ <Պառնաս>, <Նպաստ>, <Փյունիկ> և <Արաքս-2> տեղեկատվական շտեմարաններում առկա տվյալների հետ համադրման արդյունքները:

Շահառուների անհատական տվյալների համադրման արդյունքների վերաբերյալ արտահայտվեցին Ա. Ասատրյանը, Ջ. Բաղդասարյանը, Ս. Հարությունյանը, Ա. Կեսոյանը և Ա. Մինասյանը:

Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ**.

1. 2012 թվականին կնքված պայմանագրի մասով՝ աուդիտորական հաշվետվությունում արձանագրված տեխնիկական խախտումները և թերությունները շտկել, ինչպես նաև նույն խախտումների և թերությունների շտկումը իրականացնել նաև 2013 թվականին կնքված պայմանագրում:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա. Կեսոյան Ժամկետ՝ 3 օր

2. Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման մասնագետների տունայցերի մասով՝ մշակել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով սահմանվող կարգի նախագիծ և ներկայացնել հաստատման:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա. Կեսոյան Ժամկետ՝ 15 օր

3. <Նորք> ՏՎԿ ՓԲԸ-ի կողմից մշակված տեղեկատվական շտեմարանների տեխնիկական բնութագրերը ներկայացնել հաստատման:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյան **Ժամկետ՝ 10 օր**

4. Մշակել և նախարարի հաստատմանը ներկայացնել գործողությունների ծրագիր (ժամանակացույց)՝ <Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում> ծրագրի ներքին աուդիտի ընթացքում բացահայտված թերությունների և խախտումների շտկման կապակցությամբ:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա. Կեսոյան **Ժամկետ՝ 3 օր**

5. Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեի կողմից ընդունված որոշումների կատարման գործընթացի հսկողությունը վերապահել Ս. Տերտերյանին:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան **Ժամկետ՝ 15 օր**

2. Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի, 02 խմբի, 01 դասի <08. Հայաստանի Հանրապետության մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում> ծրագրի աուդիտորական հաշվետվությունում արձանագրված խախտումների և ներկայացված առաջարկությունների մասին:

(Ա. Ասատրյան, Ջ. Բաղդասարյան, Ս. Հարությունյան, Ս. Տերտերյան, Ա. Կեսոյան, Է. Գևորգյան)

Օրակարգի 2-րդ հարցի առիթով ելույթ ունեցավ Ս. Տերտերյանը, որը անրադարձավ <Հայաստանի Հանրապետության մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում> ծրագրի շրջանակներում 2012 թվականի հունվարի 31-ին՝ ՀՀ ԱՍՀՆ և <Առաքելություն Հայաստան> ՀԿ-ի միջև կնքված պայմանագրում բացայտված մի շարք տարաբնույթ խախտումներին և թերություններին:

Ա. Ասատրյանը հատուկ ուշադրությունը հրավիրեց հետևյալ հարցերին՝

ա/ <Առաքելություն Հայաստան> ՀԿ-ի համար սպասարկվող շահառուների թվաքանակը պայմանագրով նախատեսվածից 20%-ից ավելի պակաս սպասարկելու դեպքում, ծախսերը համապատասխանաբար նվազեցվում են, իսկ նույն ցուցանիշը <Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն> ՊՈԱԿ-ի համար սահմանվել էր 1%-ի չափով,

բ/ <Առաքելություն Հայաստան> ՀԿ-ին փոխհատուցման կարգով վճարված աշխատավարձի հաշվարկի բանաձևի բացակայության վրա:

ՀՀ ԱՍՀՆ և <Առաքելություն Հայաստան> ՀԿ-ի միջև կնքված պայմանագրում բացայտված մի շարք տարաբնույթ խախտումների և թերությունների վերաբերյալ արտահայտվեցին Ա. Ասատրյանը, Ջ. Բաղդասարյանը, Ս. Հարությունյանը, Ա. Կեսոյանը, Է. Գևորգյանը և Ա. Մինասյանը:

Ավարտելով Օրակարգի 2-րդ հարցը, Ս. Տերտերյանը ներկայացրեց ՀԿ-ի կողմից սպասարկված թվով 5161 շահառուների անհատական տվյալները՝ <Պառնաս>, <Նպաստ>, <Փյունիկ> և <Արաքս-2> տեղեկատվական շտեմարաններում առկա տվյալների հետ համադրման արդյունքները:

Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ**.

1. Ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնել պարզաբանում կապված <Առաքելություն Հայաստան> ՀԿ-ին աշխատավարձի փոխհատուցման չափի վերաբերյալ:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ֆինանսա տնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ Է. Գևորգյան **Ժամկետ՝ 3 օր**

2. Մշակել և նախարարի հաստատմանը ներկայացնել գործողությունների ծրագիր (ժամանակացույց)՝ <Հայաստանի Հանրապետության մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում> ծրագրի ներքին աուդիտի ընթացքում բացահայտված թերությունների և խախտումների շտկման կապակցությամբ:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա. Կեսոյան **Ժամկետ՝ 3 օր**

3. Քննարկման արդյունքում ներքին աուդիտի կոմիտեի կողմից ընդունված որոշումների կատարման գործընթացի հսկողությունը վերապահել Ս. Տերտերյանին:

Կատարող՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան **Ժամկետ՝ 3 օր**

Կոմիտեի նախագահ՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Կոմիտեի անդամներ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ջ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ս. ՏԵՐՏԵՐՅԱՆ